



ՆՈՐԱՎԱՆՔԻ ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Նորավանքի ճարտարապետական համալիրը գտնվում է Վայոց Ձորի Ամաղու գիւղից մօտ երեք կմ դէպի արեւելք՝ անդնդախոր կիրճի հիւսիսային կողմում գտնուող դարաւանդի վրայ՝ գեղատեսիլ եւ գունազարդ լեռներով զբազատուած:

Հստ պատմիչ Ստեփանոս Օրբելեանի (ԺԳ-ԺԴ. դդ.) այդ նոյն տեղում շատ ժամանակներ առաջ (հաւանաբար Զ-Ը. դդ.) կառուցուած էր մի եկեղեցի կրաչազախ քարերով Սբ. Կարապետ անուամբ (խօսքը ներկայիս բազիլիկ կիսաքանդ եկեղեցու մասին է), որի մօտ բխում էր քաղցրահամ աղբիւր: Նոյն ձորում, խիտ քարակոյտերի մէջ կար նաեւ մի այլ եկեղեցի (մատուռ) կառուցուած Փոկաս Սբ. հայրապետի անուամբ, որի մէջ բեմի տակից մի քիչ ջուր էր բխում եւ հետն էլ բուժիչ ձէթ էր դուրս գալիս:

Վերջինս յայտնի էր շատ հին աւանդոյթներից, համաձայն որոնց ունէր հրաշագործ բուժիչ յատկութիւններ: Այդ տեղանքը հայրապետի անունով Փոկաս էր կոչում:

Յիշատակուած Սբ. Կարապետ բազիլիկ եկեղեցու շուրջն էլ յետագյում ձեւագոյանում է վանական համալիրը:

Անդրադառնալով Օրբելեան իշխանական տոհմի Հայաստանում հանդէս գալուն (աւելի վաղ նրան ցեղը ըստ Օրբելեան պատմիչի լքել էր ճենաց երկիրը եւ հանգրուանել վրացական Օրբէթ ամրոցում), որոնց անուան հետ է կապուած անմիջականօրէն նորավանքի եւ մի շարք այլ եկեղեցական կենտրոնների ստեղծումը, անհրաժեշտ է բացայատել ԺԲ-ԺԳ. դարերում տեղի ունեցած հետեւալ քաղաքական դէպերը:

Օգտուելով Հայաստանում տիրող անհաստատ վիճակից ռազմական թուլութիւնից, ԺԱ. դարի 60-ական թուականներին ներխուժում են սելջուկ-թուրքերը: Զնայած համաժողովրդական դիմադրու-

թեանը եւ յատկապէս Սիւնիքում ձեռք բերած ժամանակաւոր միքանի յաղթանակներին, Սիւնեաց թագաւորութիւնը կործանւում է 1170 թուականին՝ Բաղաբերդի անկումով:

Միաւորուելով Վրացիների հետ, երբ նրանց արքունիքի բարձրագոյն պաշտօնեաներն էին Սարգիս Զաքարեան Երկայնաբազուկի որդիներ Զաքարին եւ իվանէն, ՀայՎրացական համատեղ ոյժերը մէկը միւսի հետեւից ազատագրում են բազմաթիւ Վրացական եւ Հայկական գաւառները, որոնց թւում եւ Սիւնիքը՝ 1211 թուին: Ազատագրուած հայկական նահանգներում եւ գաւառներում Զաքարեանները իշխողներ էին նշանակում հայկական իշխանական տների ներկայացուցիչներից:

Դառնալով իվանէ Աթաբէկի զինակիցներից մէկը, Լիպարիտ Օրբելեանը Սիւնիքում յաղթական կրիւներ է մղում սելջուկ-թուրքերի դէմ, ազատագրելով Որոտանը, Բարգուշատը եւ միւս գաւառները, որոնք չնորհւում են իրեն:

Մէկուկէսդարեայ սելջուկեան տիրապետութիւնից ազատագրուելուց յետոյ երկրում սկսւում է խաղաղ շրջան՝ շնարարական գործունէութեամբ:

1216 թուին Տէր-Սարգիսը իշխանաց-իշխան Լիպարիտ Օրբելեանի հրամանով եւ օժանդակութեամբ Նորավանքում եկեղեցու հիմք է դնում: 7 տարի տեւած շինարարութիւնն աւարտում է 1233 թ. «Հրաշակերպ կերտուածքով, մէջը ութ խորհրդաւոր խորաններ, սուրբ Նախավկայի անուամբ» (Ստ. Օրբելեան): Այս նորակառոյց եկեղեցու անունը գիտական գրականութեան մէջ սխալմամբ նոյնացում է Սբ. Կարապետ բազիլիկ եկեղեցու անուան հետ, որն այդ ժամանակներում արդէն գոյութիւն ունէր: Ս. Նախավկայ եկեղեցու հիւսիսային պատին Լիպարիտը փորագրել է տալիս իր տոհմի (Նախողոների) հակիրճ պատմութիւնը, որի բովանդակութիւնը յայտնի է եւ մեկնաբանուած, ինչպէս պատմիչ Ստ. Օրբելեանի կողմից, այնպէս էլ ժամանակակից գիտական գրականութեան մէջ (Գ. Գրիգորեան) եւ քննարկման առարկայ չի դարձուելու մեր հետաքրքրութեան շրջանակներից դուրս լինելու պատճառաւ:

Խաղաղ շրջանը, որ տեւում է ընդամէնը 25 տարի, ընդհատւում է 1236 թ. մոնղոլական արշաւանքով, սակայն Օրբելեանները եւ Պուօշեանները հնազանդութիւն յայտնելով մոնղոլական զօրավարներին կարողանում են պահպանել ոչ միայն իրենց իշխող դիրքերը, այլեւ բաւական մեծածաւալ շինարարական աշխատանքներ ձեռքը,

նարկելու հնարաւորութիւնները:

Լիպարիտ Օրբելեանը նորավանքում է վերադարձնում աւագ Սուրբ Նշանը եւ նուիրում հողատարածութիւններ ու գիւղեր:

1261 թ. Լիպարիտի որդի Սմբատը սուրբ Նախավկայի բակում կառուցում է ժամատուն «աղօթատեղի, հրաշակերտ կառուցուածքով՝ տաշած վէմերից ու կոփած քարերից»: Միաժամանակ նորոգում է եկեղեցինները:

Ստ. Օրբելեանը խօսելով Սմբատի մասին (իր հօրեղբօր) գովեստներ է շռայլում. «Հանճարով մեծ, խորհրդով ուժեղ, խելօք աննման, հնարք բազմագէտ, բանիւ առատ եւ քաղցր, լեզուաց հմուտ եւ ճարտար, ի դատարանի դիւնին անպարտելի»: Բոլոր դէպքերում մոնղոլների օրօք Սմբատ Օրբելեանը ճկուն դիւնագիտութեան չնորհիւ աստիճանաբար բարձր դիրք եւ հեղինակութիւն է վայելում: Նա մոնղոլական արքունիքից տրուած յատով հրամանագրով հարկերից կարողանում է ազատել իրեն ենթակայ բնակավաց բերում գործող բոլոր կրօնական հաստատութիւնները, վանական միաբանութիւններին է վերադարձնում նրանց նախկին կալուածքները: Սմբատ Օրբելեանի համբաւը տարածում է ամէնուր, նրան սկսում են անուանել «Մեծ իշխան», «հշխանաց իշխան», անդամ «Սմբատ արքայ»:

1273 թ. մահանում է Սմբատ Օրբելեանը, որը մեծ շուքով սկզբում թաղւում է իր իսկ կառուցած գաւիթ-տապանատանը, իսկ այնուհետեւ նրա աճիւնը տեղափոխուում է Տարսաիծի կառուցած դամբարանը՝ Սբ. Գրիգոր անունով եկեղեցին (1275 թ.): Տարսաիծ Օրբելեանը Սմբատի եղբայրն էր: Նրանց միջոցներով կատարուած եւ հովանաւորուած շինարարական գործունէութիւնը ընդգրկում է Սիւնեաց աշխարհի շատ վանական համալիրներ (Արատես, Թանահատ, Դարարասի սր. Աստուածածին եկ., Որոտնավանք, Հերմերի Սբ. Գէորգ եկեղեցի, Տաթեւի Գրիգոր Լուսաւորիչ, Գնդեւանք եւ այլն), որոնցից շատերի առանձին կառոյցներ վերանորոգւում կամ հիմնադրուում էին:

Շինարարական աշխատանքների լայն ծաւալ են ստանում Բուրթել Մեծի իշխանապետութեան տարիներին: Վերջինս Ելիկումի աւագ որդին էր եւ Սիւնեաց իշխանութեան գլուխ է անցնում 1300 թուականին եւ սկսում նահանգը կառավարել կրտսեր եղբայր Բուշտայի հետ միասին: Սմբատ եւ Տարսաիծ Օրբելեաններից յետոյ ԺԴ. դարի հայ իրականութեան ամենանշանաւոր քաղաքական

դէմքը եղել է Բուրթելը: Աւելի քան 40 տարի անընդհատ լինելով պատերազմների մէջ, շրջափակուած թշնամական ցեղերով, նա կարողանում է պահպանել Սիւնիքի յարաբերական անկախութիւնը եւ նպաստաւոր իրավիճակ է ստեղծում հոգեւոր ու մշակութային կեանքի բարգաւաճման համար, որի չնորիչն էլ ժամանակի հայ մտաւորականներից շատերը նրան կոչում էին «Բուրթել Մեծ» եւ այլ մակրիրներով (արեաց վեհագոյն, իշխանաց իշխեցող, մեծ սպարապետ Հայոց եւ Վրաց, թագազարմ իշխան եւ այլն):

1341 թ. Բուրթելը նշանակուում է «հիւպատոս եւ սպարապետ Հայոց» էլիխանութեան մայրաքաղաք Սուլթանիայում:

Բուրթել Մեծի մասին ժողովորի մէջ պահպանուել են մի շարք աւանդութիւններ: Բուրթելի եղբայր Բուղտան գոհուում է 1313 թ. եւ թաղում Օրբելեանների տոհմական դամբարանում:

Բուրթել Մեծը իրեն միջոցներով եւ անմիջական հովանաւորութեամբ ձեռնարկուում է Նորավանքի Սբ. Աստուածածին երկար-կանի եկեղեցի-դամբարանի շինարարութիւնը: Հասկանալի է, որ իրեն ճանաչման եւ փառքի գագաթնակէտին գտնուող Բուրթել Մեծի այս շինութիւնը պիտի արժանի լինէր եւ արտայայտէր իրեն կառուցողի մեծութիւնը: 1339 թուին աւարտուած այս ճարտարապետական կոթողը իրաւամբ համարւում է Սիւնեաց աշխարհի միջնադարեան ճարտարապետութեան գոհարը եւ ընդհանրապէս հայկական ճարտարապետութեան զարգացած միջնադարի (ԺԲ-ԺԴ. դդ.) լաւագոյն գործերից մէկը:

Բացի նշուած պաշտամունքային բնոյթի նշուած կառույցներից Նորավանքում, տարբեր ժամանակներում կառուցւում են հիւրատուն, վանականների կենցաղն ապահովող տարբեր շինութիւններ, համալիրը շրջափակող պարիսպներ եւ այլն:

Պետական հոգածութեամբ՝ Յուշարձանների Պահպանման գլխաւոր վարչութեան կողմից, 1980 թուականի գարնանից սկսուեցին Նորավանքի վանական համալիրի վերականգնողական-շինարարական աշխատանքները (Հեղինակ ճարտարապետ՝ Հրաչեայ Գասպարեան, շինարարական աշխատանքների ղեկավար՝ Արտաշէս Յովսէֆեանը):

Բացառութեամբ Բուրթելաշէն սուրբ Աստուածածին եկեղեցը, 1980-1991 թուականների ընթացքում (թէպէտ ընդհատումներով), ամբողջութեամբ վերականգնուեցին.

ա) գլխաւոր եկեղեցին (սուրբ Նախավկայ)

բ) գաւիթը

գ) Տարսահճի դամբարանը

Եւ պահպանուեց գլխաւոր եկեղեցու հարաւային կողմում գտնուող սուրբ Կարապետ եկեղեցին (միանաւ բազիլիկան):

**ՆՈՐԱՎԱՆՔԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ-ԴԱՄԲԱՐԱՆԻ
ՅՈՐԻՆՈՒԱԾՔԸ, ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ**

Եկեղեցի դամբարանի շինարարութիւնը վերագրւում է Մոմիկին, թէեւ դրա վերաբերեալ մատենագրական աղքիւրներում եւ անմիջապէս յուշարձանի վրայ ուղղակի տեղեկութիւններ կամ արձանագրութիւն չի յայտնաբերուած: Մոմիկը իր ժամանակաշրջանի բազմատաղանդ եւ մեծ անհատականութիւն ու գեղարուեստական բարձր ճաշակ ունեցող արուեստագէտն էր եւ ըստ արդի ուսումնասիրողների (Ս. Բարխուդարեան, Ստ. Մնացականեան, Գ. Գրիգորեան) միայն նրա վառ երեւակայութիւնն ու նորարարական ձգտումները կարող էին ստեղծել տուեալ ճարտարապետական գործը: Լինելով Օրբելեանների իշխանական տան գլխաւոր նկարիչը քանդակագործն ու ճարտարապետը եւ օգտուելով Ստեփանոս Օրբելեանի անձնական հովանաւորութիւնից, նա մեծարժէք գործ է ստեղծում մանրանկարչութեան, քանդակագործութեան եւ ճարտարապետութեան բնագաւառում: Մոմիկ ստեղծագործողի երեւոյթը հասկանալու համար, անհրաժեշտ է տեղեկանալ, որ այդ ժամանակներում ձեւաւորուում էր Վայոց Ձորի ճարտարապետական դպրոցը, որն արդէն տուել էր մէկ այլ փայլուն ներկայացուցիչ՝ Սիրանէս Վարդապետին: Վերջինս կառուցել է Արատես վանքի գաւիթը, Նորավանքի Օրբելեանների տոհմական տապանատունը (այս երկուսն էլ կրում են նրա հեղինակութիւնը հաստատող արձանագրութիւնները): Նրան են վերագրւում նաև Նորավանքի գաւիթը (նախնական տարբերակը) եւ այլ կառոյցներ, տապանաքարեր ու խաչքարեր Վայոց Ձորի տարբեր մասերում, որոնց համար համաձայն Նորավանքի տապանատան վրայի արձանագրութեան, նա պարզեւ է ստացել մեծ հողաբաժին՝ իրեւ ժառանգական սեփականութիւն:

Մոմիկը դարձաւ ոչ միայն Սիրանէսի արժանաւոր յետնորդը,

այլեւ հարստացրեց եւ նոր բարձրութեան հասցրեց Վայոց Ձորի ճարտարապետական դպրոցի աւանդոյթներն ու ճարտարապետագեղարուեստական արժանիքները:

Համաձայն Նորավանքի տարածքում յայտնաբերուած անշուք խաչքարի վիմագրութեան, որն ամենայն հաւանակութեամբ դրուած է եղել շիրմի վրայ եւ յետագայում տեղահան արուել, Մոմիկը մահացել է 1333 թուին՝ Սբ. Աստուածածին եկեղեցի-դամբարանի շինարարութեան աւարտից 6 տարի շուտ։ Ելնելով յուշարձանի ծաւալա-տարածական ձեւերի եւ առանձին մանրամասների ոճական վերլուծութիւններից նշուած հանգամանքը ամենեւին չի բացառում Մոմիկի հեղինակային մասնակցութիւնը եկեղեցու դամբարանի կառուցման գործում (Ա. Բարխուդարեան, Ստ. Մնացականեան, Գ. Գրիգորեան)։ Ենթադրուում է, որ նրան են պատկանել ոչ միայն կառուցի ամբողջական մտայդացումն ու նախագիծը, այլեւ նրա ձեռքի կնիքն են կրում մի շարք հանգուցային տարրերի քանդակազարդումները, որոնք կառուցի վրայ տեղադրուել են յետագայում։ Աշխատանքներն աւարտի են հասցրել Մոմիկի աշակերտնեց՝ նրա մահուանից 6 տարի անց։

Մոմիկը իր գործունէութիւնը սկսել է որպէս մանրանկարիչ՝ այդ ասպարէզում ինքնատիպ եւ մեծարժէք գործեր։ Կերտել է Նորավանքի մի շարք խաչքարեր (այդ թւում նաեւ Ստեփանոս Օրբելեանի յիշատակին նուրիուածը), որոնք հետաքրքիր եւ նորարարական էին իրենց յօրինուածքներով, առանձնանում էին անհամեմատ աւելի բարձր ցցուածքով եւ նուրբ զարդաճեւերով։ Կառուցել է Արենիի եկեղեցին, որի վրայ պահպանուել է նրա հեղինակութիւնը հաստատող արձանագրութիւնը (1321 թ)։ Ելնելով յօրինուածքային եւ ոճական առանձնայատկութիւններց, Մոմիկին են վերագրուում նաեւ Տաթեւի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու, Նորավանքի գաւթի վերակառուցման, Զօրաց եկեղեցու շինարարական աշխատանքները (Ստ. Մնացականեան)։

Ա. Աստուածածինը կառուցուած է Նորավանքի համալիրի հարաւ արեւելեան կողմում հիմնական յուշարձանախմբից մօտ 30 մետր հեռաւարութեան վրայ եւ հանդիսանում է համակառուցի ուղղաձիգ գերիշխող առանցքը։ Պատկանում է ԺԴ-ԺԴ. դարերում տարրածում գտած երկարկանի եկեղեցի-դամբարան տիպին (Գոշավանք, Եղվարդ, Կաղբէ, Կապուտան), որոնց ծագումնաբանական ակունքները տանում են դէպի վաղ միջնադարեան երկու յարկաբա-

ժիններով դամբարանային կառոյցները։ Վերջիններս Հայաստանում քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ դասւում են առաջին պաշտամունքային շինութիւնների թուին կապուած նահատակների յիշատակի յաւերժագման հետ (Հռիփսիմէ, Աղջ)։ ճարտարապետական այս յօրինուածքն աւանդաբար շարունակում է ի. դարում, ապա թ-ժԱ. դարերում։

Ի տարբերութիւն իրենց նախորդների, որտեղ առաջին յարկաբաժնի ծաւալն ընդհանուր առմամբ արտայայտում էր պատուանդանի հասկացողութիւնը, որի վրայ իբրեւ երկրորդ յարկաբաժնին, տեղադրուած էր արդէն յայտնի պաշտամունքային շինութեան ծաւալ (թաղածածկ կամ գմբէթաւոր մատուռ), ԺԳ-ԺԴ. դարերի երկյարկանի եկեղեցի-դամբարաններն ունեն միասնական մտայդացմամբ եւ յօրինուածքով ամփոփուած յարկերի ծաւալներ, որտեղ առկայ է նրանց միմեանցից բխող զարգացումն ուղղաձիգ ուղղութեամբ։ Առաջին յարկի արտաքնապէս ուղղանկիւն հատուածք ունեցող ծաւալի վրայ բարձրանում է սրան ներգծուած խաչաթեւ հատուածքով երկրորդ յարկը եւ յօրինուածքն աւարտում է երրորդ յարկաբաժնինը կազմող սիմնազարդ գմբէթով տեղադրուած խաչ կազմող թեւերի ներքին անկիւններով ստեղծուած քառակուսու հիմքի վրայ։ Այսպիսով յարկաբաժններ կազմող ծաւալների միջեւ ստեղծուածք է տրամաբանական եւ տարածականօրէն կուռ կառուցուածքային՝ համակարգ։

Նորավանքի Ս. Աստուածածին եկեղեցին ունի վերը նկարագրուած յօրինուածքային եւ կառուցուածքային համակարգը։ Առաջին յարկաբաժնինը կիսագետնափոր է, ուր իջեցնում է վեց աստիճան։ Ներքին տարածութիւնն ընկալում է ուղղանկիւն, թէեւ հիւսիսում եւ հարաւում առկայ են պատի հաստութեան մէջ թոյլ արտայայտուած խաչաթեւերը։ Բեմը բացակայում է, սակայն արեւելեան պատն ընդգծուած՝ է լուսամուտի բացուածքից ներքեւ գտնուող գծազարդ կամարով եւ խաչաքանդակով։ Կեղրոնական քառակուսի հատուածի ծածկն իրականացուած է խաչուող թաղերի, իսկ թեւերինը կամարների (հիւսիսային եւ հարաւային) եւ թաղերի (առեւելեան եւ արեւմտեան) միջոցով։ Այս տարածութեան դամբարան լինելու մասին վկայում են նաեւ նրա առաջին ուսումնասիրողների կողմից նկատուած տապանաքարերը (Քաջբերունի, Լալայեան), որոնք չունէին արձանագրութիւններ։

Երկրորդ յարկաբաժնն արտաքնապէս եւ ներքուստ խաչաձեւ

է: Ի տարբերութիւն նոյնատիպ յուշարձանների (Եղվարդ, Կապուտան) չորս անկիւններում ունի աւանդատներ (արեւմտեան զոյգը չմեկուսացուած ընդհանուր տարածութիւնից), որոնց ծաւալներն արտայայտուած լինելով արտաքնապէս, իրենց բացարձակ չափերով փոքր լինելով մասամբ են միայն լրացնում խաչաթեւերով ձեւաւորուած անկիւնային դատարկ ծաւալները:

Երկրորդ յարկաբաժնի արեւելեան ընդգծուած խորանը, աւանդատները եւ լուսամուտների համեմատաբար լայն բացուածքները (դժբախտաբար, բեմի հետքերը չկան) խօսում են այդ յարկաբաժնի եկեղեցու դեր կատարելու մասին:

Սիւնազարդ գմբէթը վեր է խոյացել խաչաթեւերի ներքին անկիւններով կազմուած քառակուսու հիմքի առագաստային փոխանցումով կազմուած բոլորաձեւ պատուանդանի վրայ: Կառոյցն աչքի է ընկնում արտակարդ հարուստ զարդանախչային յարդարանքներով: Սլացիկ ճակատներով աւարտուող խաչաթեւերի ճակատային հարթութիւնները մշակուած են կամարաշարերով եւ գծազարդ տրամատներ ունեցող գոտիններով, որոնք կեդրոնական մասում տարբեր նկարուածքներով շրջանակելով լուսամուտների եւ դռների բացուածքները՝ վերին անկիւններում աւարտում են խաչապատկերներով: Այս առումով խիստ ինքնատիպ եւ բարձր ճաշակով է ձեւաւորուած արեւմտեան ճակատը, որտեղ երկու յարկաբաժինների շքեղ մշակուած շքամուտքերով յօրինուածքին առանձին հմայք են հաղորդում նրա երկու ծայրերից դէպի երկրորդ յարկ բարձրացող քարի գեղեցիկ մշակուած պահունակային աստիճանները:

Ուսումնասիրելով յուշարձանապատկան բեկորները կարելի էր ստոյգ պատկերացում կազմել գոյութիւն չունեցող (քանդուել է 1840 թ. Երկրաշարժից) սիւնազարդ գմբէթը ձեւաւորող շթաքարային եւ գծազարդ գոտինների, քիւերի քանդակազարդ սիւնաշարքի եւ վերջիններս միմեանց հետ կապող կամարաղեղների վրայ տեղադրուած թռչնազարդ շարքի վերաբերեալ: Գեղարուեստօրէն մշակուած են եղել նաեւ վեղալը եղրափակող խնձորակը եւ անգամ ծածկասալերի ուղղորդ կիսագլանիկների վերջաւորութիւնները:

Նորավանքի Ս. Աստուածածին եկեղեցի-դամբարանը պատկանում է այնպիսի կառոյցների թուլին, որոնց կարելի է կոչել դարակազմիկ: Այն մեծ ազդեցութիւն է թողել ոչ միայն Հայկական, այլև ԺԴ. դարի Փոքր Ասիայի սելջուկեան ճարտարապետութեան վրայ (Սուլթանիսան քարաւանատան մզկիթը, Ախլաթի դամբարա-

նը) մի անգամ եւս հաստատելով հայկական ճարտարապետութեան բարձր հեղինակութիւնը ժԳ-ժԴ. դարերի սելջուկեան միջավայրում (Լ. Ա. Եակոբսոն):

Նորավանքի Ս. Աստուածածին եկեղեցի-դամբարանի բարձրաքանդակների թեմատիկան (մուտքերի բոլորաձեւ բարաւորների վրայ), մշակման պլաստիկան եւ ընդհանրապէս կիրառուած զարդանախչերն արժանացել են շատ հետազօտողների ուշադրութեանը եւ մեկնաբանուել մասնագիտական գրականութեան մէջ (Ս. Տէր-Ներսէսեան, Ստ. Մնացականեան եւ այլն), որի պատճառով, ենիներով վերականգնման խնդիրներից, կանգ առնենք միայն գմբէթակիր սիւների վրայ տեղադրուած կտիտորական խմբի յօրինուածքի վրայ:

Դեռեւս առաջին հետազօտողները (Զալալեան, Քաջբերունի), նկարագրելով եկեղեցի-դամբարանի պահպանուած հատուածները եւ յուշարձանապատկան բեկորները, յիշատակել են քանդակներ կրող սեան բեկորների մասին: Ի մի բերելով այդ յիշատակութիւնները կարելի է պատկերացում կազմել չորս տարբեր քանդակներ ունեցող սիւների մասին:

1. Ամբողջական պահպանուած սեան վրայ մեծ ելունով քանդակուած է իշխանական հագուստով մարդու պատկեր շրջուած դէպի աջ եւ ձեռքերը պարզած առաջ:

2. Կեղրոնական դիրքով պատկերուած է Աստուածածինը (քար երեք կտորից):

3. Երկու մասի կոտրուած սեան վրայ պատկերուած է եկեղեցու մանրակերտը՝ դէպի ձախ պարզած՝ իշխանական հագուստով մարդու պատկեր:

4. Մեան բեկորի կտոր, որի վրայ պատկերուած է «բագէակիրումն» (ըստ Ալիշանի) 90 սմ բարձրութեամբ: Գլխի մասը կտրուած է հանդերձը ֆարաջունման եւ գոտիով ամրացած» (Լալայեան):

Վերջին Դ. սեան բեկորը չի պահպանուել կամ առայժմ չի յաշտնաբերուած:

Հիմնուելով առաջին երեք քանդակազարդ սիւների վրայ եւ անտեսելով Դ.ի մասին մատենագրական աղբիւրների յիշատակութիւնները Ն. Մ. Տոկարսկին ներկայացնուած է գմբէթի վերականգնման գծանկար 12 առանցքային դասաւորութիւն ունեցող սիւներով, ման գծանկար 3 առանցքային դասաւորութիւն ունեցող սիւներով, արեւմտեան ճակատի 3 սիւները կազմուած են կտիտորապոնցից արեւմտեան ճակատի 3 սիւները կազմուած են կտիտորապոնցից արեւմտեան ճակատի 3 սիւները պատկերական խումբը (կեղրոնական առանցքով Ս. Աստուածածինը պատկերական խումբը).

րող սիւնն է, աջ եւ ձախ կողմերում կտիտորները):

Ստ. Մնացականեանն ընդունելով Դ. քանդակազարդ սեան գոյութիւնը, իրաւամբ ենթադրում է, որ կտիտորական յօրինուածքը պէտք է դասաւորուած լինի 5 սիւների վրայ արեւմտեան ճակատի առանցքով, որտեղ կեղրոնում տեղադրուած Ս. Աստուածածնի աջ եւ ձախ կողմերում պէտք է 2-ական սիւներ պատկերեն այն նոյն չորս անձանց, որոնք նշուած են երկրորդ յարկի մուտքի վերեւում գտնուող շինարարական արձանագրութեան մէջ: Դրանք են իշխանաց իշխան Բուրթելը, նրա կին Վախախը եւ նրանց որդիներ Բեմշքէն եւ ինանիկը:

Տրամաբանական համարելով եւ համաձայնելով Ատ. Մնացականեանի առաջարկած հինգ քանդակազարդ սիւներով կազմուած կտիտորական յօրինուածքի տարբերակին միաժամանակ չի կարելի ընդունել նրա այն ենթադրութիւնը, որ սիւների ընդհանուր քանակը տասնվեց է: Ըստ երեւոյթին Ստ. Մնացականեանը տեղում ճիշտ չի որոշել խոյակների եւ խարիսխների տարբերութիւնները, որի հետեւանքով հաշուել է տեղում պահպանուած 1 խոյակ (շթաքարային մշակումով) եւ տաս խարիսխ: Տեղում կատարած ուսումնասիրութիւնները եւ կամարաշեղների բնաչափերով կատարուած գծանկարային վերլուծութիւնները ցոյց են տալիս, որ յուշարձանի սիւնազարդ գմբէթն ունեցել է տասներկու սիւն: Ինչ վերաբերում է կտիտորական խմբի յօրինուածքին, ապա միանգամայն ընդունելի կարելի է համարել Ստ. Մնացականեանի առաջարկած տարբերակը (հինգ քանդակազարդ սիւներով):

Ինչպէս նշուեց, Նորավանքի Ս. Աստուածածին եկեղեցի-դամբարանը կիսով չափ աւերուել էր 1840 թ. երկրաշարժից եւ կանգնած էր վերջնական կործանման եղրին: Ցուշարձանի արտակարգ նշանակութիւնը նկատի ունենալով 1948 թուականին յուշարձանների պահպանութեան կոմիտէն սկսեց նրա վերանորոգումը: Նախագիծը (հեղինակ՝ Ա. Բալասանեան) կազմուած էր 1946 թ. գիտարշաւի նիւթերի հիման վրայ, որի կազմում չափագրութիւնները կատարել էին Սիվկովը եւ Կ. Սադոյեանը:

Այդ վերանորոգման ընթացքում, ըստ Կ. Յովհաննիսեանի, նախապէս պեղուեց յուշարձանի տարածքը, որից յետոյ նպատակայարմար համարուեց վերաշարել երկրորդ յարկի արեւելեան եւ հիւսիսային ճակատները՝ որմածքը խիստ խարիսխած լինելու պատճառով: Այդ աշխատանքների ընթացքում ճակատների ընդհանուր յօրինուածք-

ները նախապէս հաւաքուել եւ շարուել էին գետնի վրայ, որտեղ նրանց առանձին մասերը լրացուել էին պեղումներից յայտնաբերուած բեկորների միջոցով:

Կառույցը վերանորոգուեց մասնակիօրէն (սիւնազարդ գմբէթի պահպանուած բեկորների քանակութիւնն անբաւարար է համարուել այն վերականգնելու համար)' վերանորոգուեցին գմբէթակիր համակարգը կրող կամարները, թաղերը, ինչպէս նաեւ առանձին մանրամասներ: Իսկ ամբողջութեամբ յուշարձանը ծածկուեց նման դէպքերի համար ընդունուած թիժեղով, որը պէտք է անժամանակ կանխէր կառուցուածքը մթնոլորտային տեղումներից վնասուելուց եւ այն պահպանէր հետագայ ուսումնասիրութիւնների համար:

Արժանին հատուցելով յետպատերազմեան դժուարին տարիներին բարդ իրավիճակներում եւ ճանապարհների բացակայութեան պայմաններում այդ դժուարին աշխատանքներն իրականացնողներին՝ այնուամենայնիւ պէտք է նշել, որ 1948 թ. վերանորոգման ընթացքում թոյլ են տրուել մի քանի սխալներ եւ անճտութիւններ, որոնք սրբագրուեցին 1989 թ. կատարուած ամբողջական վերականգնման նախագծային աշխատանքների ժամանակ:

Յուշարձանների պահպանման եւ օգտագործման վարչութեան «Արփի» գիտարտագրական արուեստանոցի կողմից, մինչեւ Ս. Աստուածածին եկեղեցի-դամբարանի վերականգնողական աշխատանքներն սկսելը 1982-86 թուականների ընթացքում, արդէն ամբողջութեամբ վերականգնուել էր Նորավանքի ճարտարապետական համալիրի կազմի մէջ մտնող Ս. Նախավկայ եկեղեցին, գաւհիթը, Սմբատի դամբարանը, ինչպէս նաեւ պահպանուել էր Ս. Կարապետ եկեղեցուց մեզ հասած հատուածները (նախագծի հեղինակ ճարտարապետ Հրաչեայ Գասպարեան, շինարարական աշխատանքների դեկավար Արտաշէս Յովսէփիեան):

1996-98 թթ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի հովանաւորութեամբ, Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակի տօնակատարման գրասենեակի եւ Սիւնեաց թեմի կազմակերպմամբ, ինչպէս նաեւ գանատահայ բարերարներ Տէր եւ Տիկին Տիգրան եւ Տիանա Հաճէթեանների մեկենասութեամբ իրականացուեցին ծաւալուն վերականգնողական աշխատանքներ (ճարտարապետ Հրաչեայ Գասպարեան, վերականգնման, շինարարական աշխատանքների ղեկավար Արտաշէս Յովսէփիեան, մասնակցութեամբ Վայոց ձորի Ռինդ եւ Արփա գիւղերի քարեգործ վարպետ-

ների:

Արդիւնքում Օրբելեան Բուրժել իշխանի կառուցած հրաշակերտ եկեղեցի-դամբարանն այժմ վեր է խոյանում իր նորաստեղծ տեսքով եւ ողջ շքեղութեամբ:

Այսպիսով աւարտին հասցուեցին նորավանքի ճարտարապետական համալիրի միայն եկեղեցական շինութիւնների վերանորոգման վերականգնման աշխատանքները:

Եւ վերջապէս, 2001-2002 թուականներին շարունակուեցին շինարարական աշխատանքները վանական համալիր տարածքի բարեկարգման եւ բարեզարդման ուղղութեամբ:

Կանադահայ բարերարներ Տէր եւ Տիկին Տիգրան եւ Տիանա Հաճեթեանների մեկենասութեամբ նորավանքի տարածքում իրականացուեցին հետեւեալ շինարարական աշխատանքները.

ա) կառուցուեց վանատուն

բ) կառուցուեց յուշարձան-աղբիր՝ նուիրուած լուսահողի Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինին:

գ) իրականացուեց եւ վանատանը տեղադրուեց լուսահողի Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի կիսանդրին

դ) Աւարտին հասցուեցին տարածքի պարսպապատերի կառուցման շինարարական աշխատանքները (ներառեալ մուտքային հատուածը)

ե) բարեկարգուեց եւ բարեզարդուեց համալիրի Մջակայքը

Բարձրաստիճան հոգեւորականների, բարերարների, սիիտքի տարբեր ծայրերից ժամանած հիւրերի եւ տեղական իշխանութեան մարմինների ներկայութեամբ՝ 2002 թուականի սեպտեմբերի 12-ին Սիւնեաց թեմը կազմակերպում է վերոյիշեալ կառոյցների բացման արարողութիւնը:

Այսպիսով նորավանքը իԱ. գար թեւակոխեց՝ աշխարհին ներկայանալով այնպէս, ինչպիսին էր միջնադարում:

**The Architectural Complex of Noravank
Noravank - the Jewel of Armenian Middle Age Architecture
(summary)**

Hrachya Gasbarian

The Vayots Valley is full of ancient memories and lasting architectural values - magnificent monasterial complexes, unapproachable fortresses, with ancient residential sites and many lithographical inscriptions.

A special place in this area belongs to the renowned and illustrious Noravank - the crowning glory of the spiritual and cultural life of the Vayots Valley. Once the see of the Syuniats metropolites and the cemeterial centre of the Orbelis, it remained inactive for around a century.

The St. Stephen Protomartyr church, hall, and tomb were restored in the 1980s under government sponsorship. The Holy Mother of God church (Bourtelashen), constructed by the multi-talented architect Momik, was completely renovated in the years 1996-1998, through the organisation of the 1700 anniversary office, under the benevolence of Canadian-Armenian philanthropists Mr. and Mrs. Tigran and Diana Hachetyan

The consecration of the Holy Mother of God and St. Stephen protomartyr churches of Noravank took place on April 18, 1999 under the auspices of the Catholicos of all Armenians Karekin I of blessed memory. The day of the pilgrimage to Noravank was declared Green Sunday. In the years 2001-2002 a monastery and a monument spring were built in the complex territory; surrounding areas were beautified and cleaned.